

# Առանց կրկնությունների թվեր

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 256 MB

## Շարադրանք

Բնական թիվն անվանենք առանց կրկնությունների, եթե այն  $\theta$  թվանշան չի պարունակում, և նրանում եղած թվանշանները չեն կրկնվում: Առանց կրկնությունների թիվը կարող է ունենալ ամենաշատը ինը թվանշան: Օրինակ, հետևյալ թվերն առանց կրկնությունների թվեր են. 1 , 98 , 452 , 983457: Տրված  $N$  թվի համար, հարկավոր է արտածել այդ թվից մեծ ամենափոքր առանց կրկնությունների թիվը:

## Մուտքային տվյալներ

Տրված է ամենաշատը ինը թվանշան պարունակող մի  $N$  ոչ բացասական ամբողջ թիվ:

## Ելքային տվյալներ

Ելքում հարկավոր է արտածել  $N$  -ից մեծ ամենափոքր առանց կրկնությունների թիվը: Եթե այդպիսի թիվ գոյություն չունի, հարկավոր է արտածել  $\theta$  :

## Օրինակ

Մուտք	Ելք
99	123
133	134